

մեր դասարանէն իմ վասպուրականցի ընկերներս մեծ դեր ունէին սա յետահայեաց շահագրգռութեան մէջ: Աւելորդ է թերեւս յիշեցնել, որ այդ դասարանը, որ օգտակար մշակներ տուաւ մեր կրթական ասպարէզին, իր մէջ կը համրէր ներկայացուցիչներ մեր հայրենիքին կարեւոր կեդրոններէն: Պրուսայէն մինչեւ Վասպուրական, Սեւ ծովու եզերական քաղաքներէն, Բարձր Հայքի գիծով: Պատուական տղաք բոլորն ալ, մեծ մասով գոհ Մեծ եղեռնի: Հասարակաց գիծ մը զանոնք կը բերէր նոյն մակարդակի խօսուածքէ, դէմքէ, նկարագրէ: Այս հանգիստութիւնը, նմանապէս գոյ Հոգեկան բաղադրութեան մէջն ալ: Մեր ցեղն էր, մանրանկարուած, որուն մէջ Պոլիսն անգամ տուած էր հանած-վառած պեխաւոր էֆէնտին, ով գիտէ ո՛ր խնամակալին բարեւը ինկած մեր մէջ (աւելի յետոյ տեսայ զայն թուրք պաշտօնեայ, տիպար՝ համագգեստէն ու պեխերէն): Այս միջինէն բաւական ուժով զարտուղում մը Տարօնէն, փոքր գլխով, կարճ ու հաստ վիզով, անհամեմատ լայն ուսերով, կարծես լուծքի համար հանդերձուած, երկու տղաք: Բայց նորէն չհերքելով ընդհանրական նկարագիրը դասարանին: Այս միջինէն խոր զարտուղում՝ երկու վասպուրականցիները, հերքելով միացման գիծ ու կարելիութիւն: Անոնց դէմքը՝ քառակուսի գրեթէ: Անոնց լեզուն՝ չտաշուած բուն կաղնի: Փերթ-փերթ, մա՛նաւանդ թուրքերէն եւ ֆրանսերէն արտաբերելու ատեն: Ու խիստ նուաղում, երկարութեան մէջ ուժ փնտռող՝ երբ մեր լեզուէն Ե գիրը ունէինք տալիք: Ծաղկահար մորթ: Ամուր նստած քիթ: Մանր ու կարծր աչքեր, որոնք սեւեռումէն չէին գիտեր յոգնիլ: Այս արտաքինին վրայ աւելցնելիք հոգեկան ոչինչ: Վասնզի իրարու հետ միայն անոնք կը ժպտէին, իրենք զիրենք կ'ըլլային, մեզի հետ՝ միշտ պատենապատ: Այս զրահուած հոգիներէն ներս թափանցում մը տակաւին հիմա դժուար է մեզի: Այն ատեն անոնք կը տառապէին սորվելու համար բաներ, որոնց մասին մենք չէինք զգար ոչ մէկ ծանրութիւն: Ու զօրաւոր էին ուսումներու մէջ,